



երկրային կեանքի վախճանը եկեղեցին կ'անուանէ «ննչում» եւ ոչ թէ «մահ», իսկ տօնը կը կոչէ վերափոխում՝ դէպի վեր, երկինք տեղափոխում կամ փոխադրում:  
 Հետաքրքրական հայկական յիշատակում մը եւս կայ այս տօնի պատմութեան մէջ: Աւանդութիւնը կ'ըսէ, որ երբ Սուրբ Կոյսը ննջեց, առաքելներէն բացակայ էր հայոց ազգի լուսաւորիչներէն Սուրբ Բարթողիմէոս առաքելը: Երբ ան ճամբոր-

դութենէ կը վերադառնայ եւ կ'իմանայ, թէ ինչեր եղած են իր բացակայութեան, շատ կը վշտանայ: Առաքել եղբայրներ զայն մխիթարելու համար անոր կը յանձնեն Ս. Կոյսին պատկերը, որ հանգչելէն առաջ Աստուածածինը թաշկինակ մը դնէր ինչպէս որ պատկերած էր վրան որպէս յիշատակ: Մովսէս Խորենացի Պատմահայրը կը վկայէ, որ Մարիամի կենդանագիր այդ նկարը Բարթողիմէոս առաքելը իր հետ Հայաստան բերած է: Սուրբ Աստուածածնի վերափոխման տօնախմբութեան առիթով մեր եկեղեցիներու մէջ խաղողի օրհնութեան կարգը կը կատարուի, որով կ'օրհնուի տարուան բարիքը: Օրհնուած բերքը կը բաժնուի հաւատացեալներուն եւ պարտադիր է, որ խաղողը համտեսուի միայն օրհնուելէն ետք:

## ՎԵՐԱՓՈՒՆՈՒՄՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ԵՒ ԽԱՂՈՂՈՐՅՆԷՔ

Ս. Աստուածածնի վերափոխման կամ խաղողօրհնէքի տօնը Հայ Առաքելական եկեղեցւոյ հինգ տաղաւարներէն մէկն է, որ կը նշուի ամէն տարի Օգոստոս 15-ի ամենամօտ Կիրակին եւ այս տարի զայն պիտի տօնենք Օգոստոս 18-ին:

**Ի՞նչ է Վերափոխումի պատմութիւնը**  
 Սրբազան աւանդութեան համաձայն, Յիսուսի խաչելութենէն ետք Կոյս Մարիամը կ'ապրէր Յովհաննէս Առաքել Աւետարանիչի քով՝ 15 տարի շարունակ իր առօրեան անցնելով աղօթքի եւ պահեցողութեան մէջ: Օր մը, երբ Աստուածամայրը այցելութիւն մը կը կատարէ իր Որդիի գերեզմանը, անոր կ'երեւի Գաբրիէլ հրեշտակապետը եւ կը յայտնէ, որ հասած է անոր մահուան ժամը: Մարիամ կը շտապէ այս լուրը յայտնելու Յովհաննէսին եւ միւս առաքելներուն, կը խնդրէ մինչ իր ննջումը Սուրբ Պատարագ մատուցել: Պատարագէն ետք Տիրամայրը աղօթքով կ'աւանդէ իր հոգին: Երբ առաքելները կը շրջապատեն անոր մահիճը, հզօր լոյս մը կ'ողողէ անոր սենեակը եւ այդ լոյսի մէջ կը յայտնուի Յիսուս Բրիստոսը՝ շրջապատուած հրեշտակներով եւ իր մօր մարմինը երկինք կը փոխադրէ: Ահա թէ ինչու Սուրբ Կոյսի

խաղողի օրհնութենէն բացի, կը կազմակերպուին տօնական երգեր, պարեր եւ խաղեր: Ճոխ սեղաններ կը սարքուին աւանդական ուտեստներով եւ պտուղներով:  
 Հետագային, քրիստոնէական շրջանին, խաղողօրհնէքի տօնը եկեղեցին միացուց Աստուածածնի վերափոխման տօնին: Եկեղեցին կ'օրհնէ միայն խաղողը, որովհետեւ անիկա կը համարուի ազնուագոյն պտուղներէն մէկը եւ խաղողէն է, որ կը պատրաստուի պատարագի գինին, որ կը խորհրդանշէ Քրիստոսի արիւնը:  
 Աստուածածնայ տօնին յաջորդող օրը մեռելոց է: Բոլոր եկեղեցիներուն մէջ հանգուցեալներու հոգիներուն խաղաղութեան համար հոգեհանգստեան պատարագ կը մատուցուի, որմէ ետք հաւատացեալները կ'այցելեն իրենց հարազատներուն շիրիմները:



ԹԻՒԸ ՊԱՏՐԱՍՏԵՃ՝ ՈՒԹԱՆ ԿԱՌԵԱՆ-ՏԻՔՄԻՔԵԱՆՆ  
 ՆԿԱՐԱԶԱՐՈՒԵՃ՝ ՈՒՅՅԻ ՔԵՇՈՒՇԵԱՆ



Մեծ եղաւ Մեծն Տիգրանի գարմանքը, երբ լսեց թէ հայ ժողովորդի թշնամին ո՛չ ասորին է, եւ ո՛չ ալ պարսիկը, այլ կը կոչուի թուրք, թուրք, որ գոյութիւն իսկ չէ ունեցած ժամանակին:

- Թուրքը խուժան է, անգութ ու գազան, ան գործեց աշխարհի ամենամեծ ոճիրը հայոց ցեղասպանութիւնը, հիմա մենք քիչ ենք՝ միայն 10 միլիոն, սփռուած աշխարհի չորս ծագերուն աւելցուց Տիգրանիկ յուզուած:

Արքան կանգնեցաւ, խոժոռ հայեացքը շրջեց աջ ու ձախ, ոտքերը գետին դոփեց եւ բարձրաձայն յայտարարեց.

- Մի՛ մտահոգուիր Տիգրանի՛կ, այո՛, պատիկ ես դեռ, բայց թող հաւատքդ ըլլայ մեծ, հաւատքդ՝ մեր անցեալին, հաւատքդ՝ մեր «խենթութեամբ կերտուած Մայիս 28-ին, մեր պայծառ գալիքին, միայն ամո՛ւր կառչած մնացե՛ք հայու սրբութիւններուն, քանզի ես քու մէջդ եմ իմ հզօրութեամբ, ընկերներդ ալ իրենց մէջ ունին իմ ընկերներս:

- Գիտցի՛ր Տիգրանիկ, ես պիտի վերադառնամ, պիտի վերադառնամ ու հետս բերեմ փառքի օրերս, իսկ հիմա, ա՛ն իմ պատկերս հետդ եւ երբ որ տկարանաս, նայե՛ ինձի ու հզօրացի՛ր:

Տիգրանիկ փոքրիկ, կապուտակ աչքերը բացած՝ կը դիտեր ափին մէջի մետաղադրամը:

- Ո՞ր մնացիր, Տիգրանիկ:  
Ուսուցչուհին գինք կը կանչեր...:

(Վերջ)



# ԽԱՂԷՐ

## ԿԱՆԱՐԴԱԿԱՆ ՔԱՌԱԿՈՒՄԻՆ

Փորձեցե՛ք հետեւեալ կախարդական քառակուսին ամբողջացնել յարմար թուանշաններով, նկատի ունենալով, որ հորիզոնական, ուղղահայեաց եւ շեղակի շարքերուն գումարը հաւասար է 27-ի:

Օգտագործեցե՛ք 5-13 թիւերը:

12		
	9	11
8		


## ԿՐՆԱՊ ԱՍԲՈՂՋԱՅՆԵԼ

Փորձեցե՛ք գտնել իւրաքանչիւր շարքին պակասող թիւը:

- ա.- 11 22 33 44 ----- 66
- բ.- 2 4 8 ----- 32 64
- գ.- 9 18 ----- 36 45 54
- դ.- 160 80 40 ----- 10 5

Պատասխանները  
 մ.- 55  
 բ.- 16  
 գ.- 27  
 դ.- 20

## ԿՐՆԱՊ զՏՆԵԼ ԱՆՈՒՇԵՂԵՆԻՆ ՅԱՍՑՆՈՂ ՃԱՄԲԱՆ:



# ՕՐ ՄԸ՝ ԱՐՔԱՅԻՑ ԱՐՔԱՅԻՆ ՀԵՏ

Սիրական Հապիպ

Տիգրանիկ անշնչացած ու ապշահար կը դիտէ անոնց արեւի պէս փայլուն գրահներն ու շողշողուն թուրերը: Յանկարծ, ձիու ամուր սմբակներ կը լսուին, ձիաուորները վար կ'իջնէն ձիերէն եւ կը խոնարհին իրենց թագաւորին առջեւ:

Այո՛, Տիգրանիկ ճանչցաւ, այդ խորհրդաւոր օտարականը հայոց պատմութեան դասագիրքի կողքին վրայի ոսկեդրամի դէմքն էր իր պսպղուն թագով: Անհաւատալի էր, Մեծն Տիգրանն էր:

Վախն ու ուրախութիւնը իրար խառնած Տիգրանիկ կը հարցնէ.

- Ո՞ր եմ ես, ո՞վ էք դուք:

- Անուշիկս, կա՞յ մէկը որ չի ճանչնար գիս: Ես արքայից-արքայ Մեծն Տիգրանն եմ: Դուն ուրկե՞ կու գաս, ո՞ր են ծնողներդ:

- Մե-մե-մե՛ծն Տիգրան, ես միայն պատմութեան մէջ լսած եմ ձեր անունը, տե՛ր արքայ,- կմկմաց Տիգրանիկ:

- Ուրեմն դուն ապագայէն կու գաս:

- Այո՛, մենք երկու օրէն կաղանդ պիտի տօնենք, 2019 պիտի ըլլայ:

- Դուն հա՞յ ես:

- Տիգրանակերտցի եմ, հայ եմ եւ հայ ալ պիտի մնամ, քանի որ ունինք ձեզի նման հզօր արքաներ,- հպարտօրէն կը պատասխանէ Տիգրանիկ:

Ու քանի որ Տիգրանիկ հայոց արքայից արքային հիւրն էր, հիմա նստած էր արքայական ճոխ սեղան կը վայելէր Տիգրանակերտի համով ճաշերը՝ Դաւուրմայէն սկսեալ ու մեծավարի կը զրուցէր արքային հետ...:

Մեծն արքային քաջագործութիւնները լսելէ ետք, հիմա Տիգրանիկին հերթն էր: Ան կը պատմէր հայոց պատմութեան դասերէն իր գիտցածները, ունեցած էինք շատ թագաւորներ, մասնակցած էինք շատ պատերազմներու, դարձած էինք առաջին քրիստոնէայ պետութիւնը, ստեղծած էինք մեր սեփական գիրն ու գրականութիւնը, ունեցած էինք ֆետայիներ Արցախի ազատամարտիկներ:



# ԼՍԱՎԾ ԷՔ ՊՐԱԶԻԼԻ ՍԵՏՐԱՏՕ ՏԱՓԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

Մեզի աւելի ծանօթ է ափրիկեան տափաստանը, սակայն նման տարածք մըն ալ գոյութիւն ունի Հարաւային Ամերիկա՝ Պրազիլի մէջ: Սետրատօ անունով այս տարածքը անհետացումի վտանգի տակ կը գտնուի: Սակայն հաստատութիւններ որոշած են զայն փրկել:

Սետրատոյի տափաստանը նուազ ծանօթ է, քան՝ Ամազոնի վայրի անտառը, որ կը գտնուի նոյն երկրին մէջ: Սակայն անիկա ալ կորսուելու վտանգին տակ կը գտնուի մարդոց գործունեութեան պատճառով: Որպէսզի ան չանհետանայ, բազմաթիւ մեծ հաստատութիւններ որոշած են անոր օգնել:

Սետրատօ կը կազմէ Պրազիլի տարածքին 20 առ հարիւրը: Անիկա հաւասար է իրարու միացուած Ֆրանսայի, Գերմանիոյ, Իտալիոյ, Սպանիոյ եւ Անգլիոյ տարածքներուն: Այս տափաստանը շատ մեծ կարելորութիւն ունի երկրին համար: Անձրեային եղանակին ան կարելիութիւնը կու տայ հաւաքելու բաւականաչափ ջուր՝ զայն բաժնելու համար Պրազիլի 2/3: Այս ջուրը կը գործածուի նաեւ էլեկտրականութիւն հայթայթելու գրեթէ ամբողջ երկրին:

Սետրատոն Պրազիլի ամենէն հին վայրն է, որ անասուններու խումբեր համերաշխ ձեւով կ'ապրին իրենց բնական միջավայրին մէջ: Անիկա գոյութիւն ունի 65 միլիոն տարիներէ ի վեր:

Մենք հոն կը գտնենք նաեւ արտասովոր չափով տարբեր անասուններու եւ բոյսերու տեսակներ 160 հազար: Անիկա աշխարհի տարբեր կեանքի տեսակներ պարունակող վայրն է, հոն գոյութիւն ունին 11 հազար բոյսի տեսակներ: Այս բոյսերը արժեքաւոր են, որովհետեւ անոնք կը գործածուին դեղերու պատրաստութեան մէջ եւ իբրեւ սնունդ:

Այս պատճառով է նաեւ, որ անիկա կը կոչուի «կենդանի դեղարանը»:

Այս բոյսերուն մեծ մասը շատ հասակաւոր չեն, սակայն ունին շատ մեծ արմատներ, որոնք կրնան մինչեւ 9 մէթր երկարութիւն ունենալ: Անոնց շնորհիւ բոյսերը կրնան ապրիլ չոր եղանակներու ընթացքին, որովհետեւ անոնք կրնան շատ խորերը իջնել ջուր փնտռելու համար:

Բոյսերու կողքին, այս տափաստանին մէջ մենք կը հանդիպինք հրակայ անասուններու, ինչպէս՝ մրջիւն ուտող անասունը (անթիթըր) կամ միջատ ուտող եւ պատեանով մը օժտուած արմատիլլոն: Այս անասունները մաս կը կազմեն Սետրատոյի 12 անասուններու տեսակներուն, որոնք կրնան վերջնականապէս անհետանալ: Հոն կարելի է գտնել նաեւ ընձառիծներ, ջուրի խոզեր եւ կապիկի տարբեր տեսակներ:

Սակայն այս բնական վայրը աշխարհի ամենէն շատ վտանգուած վայրերէն մէկն է, մարդուն զայն շահագործելու սկսած վայրկեանէն մինչեւ այսօր անոր չափը կէտով նուազած է, եւ եթէ ասիկա շարունակուի մինչեւ 2050 թուականի սկիզբը Սետրատոյէն միայն 15 առ հարիւրը կը մնայ: Ասիկա կը նշանակէ, որ անասունի եւ բոյսի աւելի քան 480 տեսակներ պիտի կորսուին, եւ աղէտը պիտի շարունակուի:

Սակայն կարելի է խուսափիլ նման վտանգէ: Պրազիլի մէջ արդէն գոյութիւն ունի 40 հեքթար հող՝ երկրագործներուն տրամադրուելու համար:

